ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Դաստիարակի կերպարը նախադպրոցականի անձի ձևավորման գործընթացում

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ՝ Լենա Վարդանյան Գրիգորի

Էջմիածնի թիվ 10 «Շուշան» մանկապարտեզ

Վերապատրաստող ՝ մ.գ.թ., Ք. Ասմարյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ.....5

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....8

ԳԼՈՒԽ 3

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ.....12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵԽԱՅԻՆ ԵՐԲԵՔ ՄԻ՛ ՍՈՎՈՐԵՑՐԵՔ ԱՅՆ, ԻՆՉՈՒՄ ԻՆՔՆԵՐԴ ՎՍՏԱՀ ՉԵՔ:

Ջ. ՌԵՄԿԻՆ

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում կրթական հաստատություններին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է դաստիարակի, ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը դաստիարակի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է դաստիարակի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները :

Դաստիարակն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորություն պիտի ստանա:

Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է զարգացնել երեխաների գեղագիտական ճաշակը, հաղորդակցային ունակությունները, սովորեցնել զգալ արվեստի ստեղ-ծագործությունների կատարելությունն ու ներդաշնակությունը, գթասիրտ, զգայուն վերաբերմունք դաստիարակել շրջապատի նկատմամբ: Այդպիսի հատկանիշների զարգացումը նշանակում է հաղորդակցում համամարդկային մշակույթին և նրա դրսևորումներին՝ գիտական հետազոտման մշակույթին, գործունեության մշակույթին, գեղագիտական մշակույթին, միջանձնային հաղորդակցման մշակույթին, վարքի մշակույթին, արժեհամակարգին և այլն:

Թեմայի արդիականությունը՝ Վերջին տարիներին կրթության բովանդակության և նպատակների յուրացման առումով հսկայածավալ նորարարություններ և առաջարկություններ են արվել տարբեր երկրների և միջազգային կրթական կառույցների կողմից, մշակվել և ներդրվել են ուսումնադաստիարկչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ եղանակներ, երեխաների ուսումնական կարողությունների խթանման նոր հնարավորություններ: Մանկավարժական գործունեությունը բարդ և բազմաբաղադրիչ է, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դաստիարակի, ուսուցչի վարպետությամբ, մասնագիտական որակներով և հաղորդակցական կարողությունների տիրապետման մակարդակով, նրա անձնային որակներով: Ուստի այս հետազոտության ընթացքում կանդրադառնանք դաստիարակի կերպարին և նրա կերպարի դերին և նշանակությանը նախադպրոցականի անձի ձևավորման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ բացահայտել դաստիարակի կերպարի դերը նախադպրոցականի անձի ձևավորման գործընթացում:.

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական , գիտամանկավարժական և գիտամեթոդական գրականությունը,
- Ներկայացնել նախադպրոցականի հետ աշխատանքին նախապատրաստվելու կարևորությունը, այդ աշխատանքի բովանդակությունը , գրանցել արդյունքները։
- Սահմանել պարապմունքին նախապատրաստված դաստիարակի քայլերը։
- Սահմանել այն արժեհամակարգը, որին պետք է տիրապետի դաստիարակը։

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ

Դաստիարակն է մանկավարժական մշակույթի հիմնաքարը և արժեհամակարգ ձևավորողը նախակրթարանում, մանկապարտեզում, ուսուցիչը՝ դպրոցում, ուրեմն նա պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որն էլ սկսվում է մանկավարժական կողմնորոշումից։

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

• մարդասիրությունը, երեխայի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,

• իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,

• գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,

• մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,

• մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,

• մանկավարժի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը[1]: Մանկավարժի վարքը դաստիարակի, ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է նրա մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը:

1 Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87,

Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես մանկավարժի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ–միջոցներ–արդյունք–վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության, երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ:

Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես մանկավարժի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական

մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: *Բայց նախ և առաջ մանկավարժն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք մանկավարժի կերպարին և դերին:*

Մանկավարժի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, անհիմն է, և կրում է մտահայեցողական բնույթ: Մանկավարժական հետազոտությունը ինքնանպատակ չէ,այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման ուղիները:

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում արժեքային գերակայությունների փոփոխության, հասարակության արժեքային պատկերացումների շարունակական վերարժևորման գործընթացներից: Կրթամշակութային ժամանակակից հարացույցը հիմնվում է մարդասիրական գաղափարների վրա, որոնք ընդհանրացնում են ճանաչողության էմպիրիկ փորձը և նրա տեսական իմաստավորումը: Ազատության գաղափարի գերակայությունը մարդասիրական արժեքների համակարգում պայմանավորված է նրանով, որ ազատության գաղափարը դրսևորվում է որպես մտքի և հոգու ազատություն՝ ընդգրկելով քաղաքականությունը, սոցիալական հարաբերությունները, գիտությունը, կրթությունը, բարոյականությունը[1]:

Մանկավարժական մեծ հանրագիտարանում «Արժեբանություն» եզրույթը ներկայացված է մի շարք սահմանումներով՝

1. Փիլիսոփայական ուսմունք է արժեքների և բարոյագիտական գնահատումների մասին (արժեքների բարոյագիտություն), որը մասնավորապես ուսումնասիրում է մարդու կյանքի իմաստը,

2. Մանկավարժական նոր հասկացություն, որն ուսմունք է մարդկային արժեքների բնույթի, կյանքի իմաստի, մարդկային գործունեության վերջնական նպատակի մասին: Արժեքը մնայուն նշանակություն ունեցող գործ է, ստեղծագործություն, ավանդ, ներդրում, իրական հատկանիշ, արժանիք: Այն «առարկա է, երևույթ, սոցիալական վարքի նորմ, որը կարող է ծառայել որևէ պահանջմունք բավարարելու համար»[2]: Արժեքը իրականության առարկաների և երևույթների հասարակական–մշակութային էությունն է, որը նորմատիվային նշանակություն է ձեռք բերում:

Արժեքային կողմնորոշումների ձևավորումը տևական գործընթաց է, որն առնչվում է անձի կենսագործունեությանը և հոգևոր էությանը և կարող է ընդգրկել մարդու ամբողջ կյանքը, սակայն դրա հիմքերը դրվում են դեռևս մանկական տարիքում՝ նրա ձևավորման վաղ փուլում: Նախադպրոցականի արժեքային կողմնորոշումների ձևավորումը հարկ է դիտարկել արժեքների ընկալումից,

---

[1]Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., «Ան–Ջոն», 2011, 160 էջ:

[2]Նալչաջյան Ա. Ս., Հոգեբանական բառարան, Եր., «Լույս», 1984, 237 էջ:

գնահատումից արժեքային կողմնորոշումների կայունացման գործընթացում, որի երկկողմ բնույթը կրթական գործընթացում արտահայտվում է դաստիարակի և երեխայի փոխադարձ գործունեության կազմակերպման միջոցով: Ըստ Մ. Ռոկիչի՝ արժեքը բնորոշվում է որպես անձի համոզմունք, որը վարքի դրսևորման որոշակի միջոց է կամ կեցության վերջնական նպատակ և նախընտրելի է անձնական կամ սոցիալական տեսանկյունից [1]:

Ուսուցման գործընթացում երեխաների արժեքային կողմնորոշումները ձևավորվում են մանկավարժական ներգործության միջոցներով, որոնք իրականացվում են մանկավարժական նպատակաուղղված ու համակարգված գործընթացում՝ հաշվի առնելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Այսօրինակ ներգործությունն իրականանում է դիդակտիկական նպատակահարմարության սկզբունքով՝ կրթական գործընթացի նպատակներին համապատասխան: Նախադպրոցականի տարիքը բնութագրվում է համակարգային մի շարք փոփոխություններով: Այս տարիքում ձևավորվում են վարքի և գործունեության նոր մեխանիզմներ, դրդապատճառներ, պահանջմունքներ, տարաբնույթ հետաքրքրություններ, որոնց շնորհիվ կայուն հիմք է ստեղծվում բարոյական որոշակի նորմերի յուրացման համար: Այս տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է, որի ընթացքում ձևավորվում է վերլուծական և գնահատողական վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, որում էական նշանակություն ունեն երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, անկեղծությունը: Երեխան ստանձնում է սոցիալական նոր՝ անձի դեր. նրա վարքի, ապրումների ու գործողությունների մեջ ի հայտ են գալիս նորագոյացություններ: Նախադպրոցականը գիտակցում է իր սոցիալական «Ես»–ը, ձգտում է իր տեղն ու դերն ունենալ շրջապատում, ինքնահաստատվել, ակտիվ վերաբերմունք է դրսևորում դրականի ու բացասականի, արդարի ու անարդարի, բարու և չարի նկատմամբ, գիտակցում է իր և դիմացինի արժեքային արարքները: Երեխան մանկապարտեզ է գնում նորի սպասումով, գիտակցում է իր տեղը դաստիարակի ու ընկերների հետ ունեցած հարաբերություններում, գնահատում է հաջողությունները և դրսևորում համարժեք վարք: Ուստի այս տարիքում պետք է աջակցել երեխային և զարգացնել գիտելիքների՝ կարևոր ու արժեքավոր լինելու ըմբռնում՝ դասավանդվող առարկաների գրավիչ կողմերի ակնառու ցուցադրմամբ: Դա նպաստում է ոչ միայն իմացական հետաքրքրությունների, այլև արժեքային գնահատողություններ անելու կարողությունների ձևավորմանը: Քանի որ նախադպրոցականների սոցիալական փորձը հարուստ չէ և սահմանափակվում է սոսկ նրա կենսափորձի շրջանակներում, ուստի նա չի կարող լիարժեքորեն ընկալել և իմաստավորել արժեքային գերակայությունները:

[1] Rokeach M., Undersatnding Human Values, New York: Free Press, 1979.

Ահա թե ինչու նախադպրոցականների արժեքային համակարգի ձևավորման համար պետք է մեծ ուշադրություն հատկացվի առհասարակ արժեքների վերաբերյալ նրա պատկերացումների ընդլայնմանը: Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ գերակշռում են այնպիսի արժեքներ, որոնք մարմնավորում են ազնվությունը, բարությունը, գթասրտությունը, ճշտապահությունը, կազմակերպվածությունը, կարգապահությունը, սերն ու նվիրվածությունը ընտանիքի և ուսուցչի նկատմամբ, որը հաճախ վախից, ցավից ու մենակությունից խուսափելու արտահայտություն է: Նախադպրոցականի համար մեծագույն արժեք են դաստիարակը, ծնողները, հաղորդակցումը, շրջապատի կողմից գնահատված լինելը, խրախուսանքը, որոնք նրանց մեջ հաղթահարում են տարբեր բարդույթներ: Նախադպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Այս տեսանկյունից Ն. Ա. Աստաշովան արժեքը դիտարկում է որպես բազմամակարդակ համակարգ, որի մակարդակները կամ բաղադրիչներն են՝

• իդեալը՝ կատարյալ կերպար, որը որոշում է մարդու գործունեությունը,

• նորման՝ ներքին ընկալվող պարտականությունը,

• սկզբունքը՝ ղեկավարող գաղափարը,

• նպատակը՝ արդյունքի գերակայությունը, որը մարդու գործողությունների ինտեգրման մեխանիզմ է և որոշում է նրա գործունեության հիմնական նպատակները[1]:

Նախադպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսուցման գործընթացի սուբյեկտների փոխներգործության արդյունք է, որի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ երեխաների մղումն ու ակտիվ գործունեությունը, և՛ այդ գործընթացը կազմակերպող դաստիարակի գործունեությունը:

Վ. Ա. Կարակովսկին առաջադրում է հետևյալ արժեքները.

• Երկիր մոլորակը՝ մարդկության ընդհանուր տունը,

• հայրենիքը՝ յուրաքանչյուր մարդու համար միակը, եզակին, որը շնորհված է ճակատագրի կողմից,

• ընտանիքը՝ որպես հասարակության նախնական միավոր, անձի ձևավորման

[1]Асташова Н. А., Учитель: проблема выбора и формирование ценностей, Воронеж, 2000, 270 с.

և գոյության միջավայր,

• աշխատանքը՝ որպես մարդկային կեցության հիմք, որն արտահայտում է մարդու սոցիալական էությունը,

• գիտելիքը՝ որպես ստեղծագործական աշխատանքի աղբյուր,

• մշակույթը՝ որպես կենսագործունեության հոգևոր և նյութական ոլորտներում մարդու կողմից կուտակված մեծագույն հարստություն,

• խաղաղությունը՝ մարդկանց, ժողովուրդների և պետությունների միջև համաձայնության, մարդկության գոյատևման կարևոր պայման,

• մարդը՝ որպես բացարձակ արժեք, բոլոր իրերի չափանիշը, դաստիարակության նպատակը, միջոցն ու արդյունքը[1]:

Ս. Ի. Մասլովն առաջարկում է արժեքների հետևյալ խմբերը՝ բարոյական, իմացական, կրոնական, գեղագիտական, սոցիալական, նյութական[2]:

Արժեքների այս դասակարգումը բխում է կրթության բովանդակության ձևավորման, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, տարրական կրթության բովանդակության յուրահատկության և նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունների հաշվառման դիդակտիկական սկզբունքներից: Այս մոտեցումն առավելագույնս արտահայտում է մեր կողմից քննարկվող հիմնախնդրի առանձնահատկությունները:

---

[1]Караковский В. А., Стать человеком. Общечеловеческие ценности – основа ценностного учебно–воспитательного процесса, М., 1993, 80 с.

[2] Маслов С. И., Эмоционально–ценностное образование младших школьников /С.И. Маслов, Тула, Изд–во ТГПУ им. Л. Н. Толстого, 1999, 130 с.

ԳԼՈՒԽ 3

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Անառարկելի փաստ է այն, որ դաստիարակն իր կերպարով, անձնական օրինակով մեծ դեր ունի նախադպրոցականի անձի ձևավորման գործում: Այստեղ պետք է փաստենք այն, որ այդ պրոցեսն իրենից ներկայացնում է ուսուցման և դաստիարակության համադրում: Ուսուցման հետ զուգահեռ մենք իրականացնում ենք նաև երեխաների դաստիարակությունը:

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին: Սակայն, կրթական պրակտիկայում դաստիարակության և ուսուցման ոլորտները նկատելի չափով տարանջատվում են, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու կրթության ընդհանուր որակի ցանկալի մակարդակ:

Դիագրամի միջոցով ներկայացնենք ուսուցման և դաստիարակության ազդեցությունը նախադպրոցականի անձի ձևավորման գործընթացում ըստ մեր հետազոտության



Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող

արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, երեխաների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, ***մեր խորին համոզմամբ և ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում երեխաների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:*** Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության պայմաններում դաստիարակի, ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: ***Մանկավարժի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:***

Երբ դաստիարակը ընթերցում է հեքիաթներ և դրանք ներկայացնում բեմադրության միջոցով՝ առավելություն տալով այս կամ այն կերպարին , ապա սովորողն անմիջապես ընկալում է ներկայացվող նյութը և այն էլ այնպես ինչպես մատուցում է դաստիարակը:Ընթերցանության պարապմունքի ընթացքում ձևավորվում են երեխաների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը. ստեղծվում է լեզվական–մշակութային միջավայր: Մեր համոզմամբ այն վարժություններն ու առաջադրանքները, որոնք ենթադրում են տեքստում առկա արժեքային հակասությունների լուծման ուղիների ինքնուրույն որոնում, հնարավորություն են տալիս հուզական–արժեքային հակադրությունների առանձնացման, դրական և բացասական կերպարների, երևույթների շեշտադրման միջոցով առավել ցայտուն ու ընկալելի դարձնելու բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը, վեհը ու ստորը: Նախադպրոցականներն առանձնահատուկ սիրով են կատարում դերային խաղերը, սիրում են լինել այս կամ այն հերոսի կերպարում: Նախադպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից բացառիկ կարևոր դեր ունեն բանավոր խոսքի տեսակները: Ստեղծագործական, ազատ, ընտրովի, հորինողական իրավիճակները, կապակցված խոսք կառուցելուց բացի, նպաստում են

բառապաշարի հարստացմանը, ունեն զարգացնող նշանակություն: Մտքեր և կարծիքներ արտահայտելը զարգացնում են ստեղծագործական միտքը և վերլուծական մտածողությունը, ունեն երեխաների արժեքային կողմնորոշումները ձևավորելու ներուժ: Հեքիաթներն ու առակները, պատմվածքներն ու բանաստեղծությունները , դրանց տեքստի բովանդակությունը երեխային պետք է մղի ինքնուրույն դատողություններ անելու, սեփական տեսակետ և դիրքորոշում ձևավորելու:

Կրթության բովանդակության բոլոր կողմերն իրականացվում են ուսուցման միջոցով:

Իմ կերպարը, խոսքը, ժեստերը, արտաքին տեսքը, անձնական օրինակը նպաստում են.

- երեխաների բանավոր խոսքի զարգացմանը,
- բառապաշարի հարստացմանը,
- արժեհամակարգի ձևավորմանը,
- դիմացինին օգնելու, բարին արարելու, գեղեցիկն ու վեհը գնահատելու կարողությունների ձևավորմանը,
- ինքնուրույն և խմբային աշխատելու ունակությանը,
- շրջապատի նկատմամբ զգայուն վերաբերմունքի ձևավորմանը,
- լինել գթասիրտ և կարեկցող և այլն:

Այս ամենը ես իրականացնում եմ.

- Խաղերի միջոցով:

Խաղը մարդուն ուղեկցել է նրա պատմական զարգացման բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն որպես զվարճալի զբաղմունք , այլև կյանքի տարբեր հարաբերություններում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, քննադատական մտքի ձևավորման միջոց: Մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու այն խոսքերը, թե « եթե մանկավարժությունն ուզում է մարդուն դաստիարակել բոլոր հարաբերություններում, ապա նա պետք է մարդուն ճանաչի բոլոր հարաբերություններում» այսօր նույնպես արդրական է: Մարդուն բոլոր իմաստներով, բոլոր կողմերով ճանաչելու համար բավական է նրան ուսումնասիրել խաղային գործունեության ժամանակ: Խաղերի ժամանակ դաստիարակը դառնում է խաղընկեր և դառնում է նրանցից մեկը:

- Ժամանակակից մեթոդների կիրառման միջոցով

Նոր մեթոդներն օգտագործելով՝ դաստիարակը պետք է կարողանա վառել երեխայի մեջ թաքնված ջահը, հետաքրքրություն առաջացնել, որպեսզի նա կարողանա մտածել, ինքնուրույն մտքեր արտահայտել, ստեղծագործել, համագործակցել: Դաստիարակ-սովորող երկկողմանի աշխատանքները նպաստում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը, երեխաների տրամաբանական մտածողության, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ինչպես նաև արդյունավետ համագործակցության և փոխադարձ վստահության կայացմանը:

- Տեսանյութերի, սահիկաշարերի, մուլտֆիլմերի դիտման, դրանք վերարտադրման, դերային խաղերի միջոցով, երբ դաստիարակն ինքն էլ մասնակցում է և ստանձնում որևիցե դեր:
- Ստեղծագործաբար մոտենալով հարցին , երգելով և պարելով , ազատ ժամանցի կազմակերպմամբ:
- Էքսկուրսիաներ իրականացնելու միջոցով:
- Թատրոն հաճախելու և զբոսանքներ կազմակերպելու միջոցով և այլն:

Ի վերջո իրականացնելով էկոլոգիական, հայրենասիրական, գեղագիտական, բարոյական, ֆիզիկական դաստիարակություն:

Պարապմունքի օրինակ ներկայացնեմ էկոլոգիայից: Պարապմունքը անցկացվել է ավագ խմբում որտեղ ընդհանուր երեխաների թիվը՝ 30 երեխա (17 տղա , 13 աղջիկ): Նպատակն է լաբորատոր փորձի շնորհիվ ստանալ ձյուն : Զարգացնել երեխաների երևակայությունը: Քանի որ ամեն տարի չէ որ մեր տարածաշրջանում տեղում է ձյուն և որքան էլ ցուցադրենք երեխաներին նկարներով , միևնույնն է շոշափելով, զգալով ավելի են նրանք տպավորվում : Եվ ես մտածեցի պարապմունքը պլանավորել այլ կերպ՝ վերածելով լաբորատոր փորձի :

Փորձի համար տրամադրվել էր համապատասխան նյութեր՝ կերակրային սոդա և սափրվելու համար նախատեսված մածուկ : Հատուկ չափաբաժնով խառնելով նյութերը ստացել ենք ձյուն : Փորձը բոլոր երեխաների համար շատ մատչելի էր և ըմբռնելի :Այսինքն մենք այստեղ մեր փորձի շնորհիվ ստացանք ձյուն և պատրաստեցինք ձնագնդի:

Հետևությունն այն է , որ դաստիրակի մտքի թռիչքի և մտահաղացման շնորհիվ կարելի է պարապմունքը պլանավորել այլ տարբերակային ձևերով , պահպանելով պարապմունքի կառուցվածքը :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ ուսումնասիրելով հետազոտության այս թեման հանգեցինք մի շարք եզրակացությունների.

- նախադպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը համակարգված գործընթաց է:
- Մանկապարտեզի, նախակրթարանի գերակա խնդիրն է ազգային արժեքների պահպանումը, ազգային և համամարդկային արժեքների ներդաշնակումը, հայապահպան և հայակերտման գործընթացների ապահովումը: Իսկ դա հնարավոր է, եթե համապատասխան սոցիալական ինստիտուտում ազգային, մշակութային, բարոյական, ինքնության արժեքները փոխանցվեն միջսերնդային համագործակցությամբ:
- Մանկավարժական գործունեությունը բարդ և բազմաբաղադրիչ է, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մանկավարժի վարպետությամբ, մասնագիտական որակներով, հաղորդակցական կարողությունների տիրապետման մակարդակով և, իհարկե, աշխատանքի պատրաստվածության մակարդակով:
- Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել համագործակցելու կարողությունների ,արժեքային համակարգի ձևավորման գործընթացը , երբ տարվող աշխատանքները կառուցված են երեխաների տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:
- Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար:
- Նախադպրոցականների անձի ձևավորման գործընթացում որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում երեխաների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., «Ան–Ջոն», 2011,

Նալչաջյան Ա. Ս., Հոգեբանական բառարան, Եր., «Լույս», 1984,

Асташова Н. А., Учитель: проблема выбора и формирование ценностей, Воронеж, 2000,

Караковский В. А., Стать человеком. Общечеловеческие ценности – основа ценностного учебно–воспитательного процесса, М., 1993,

Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1,

Маслов С. И., Эмоционально–ценностное образование младших школьников /С.И. Маслов, Тула, Изд–во ТГПУ им. Л. Н. Толстого, 1999,

Rokeach M., Undersatnding Human Values, New York: Free Press, 1979.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԿԱԴՐԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ